

## Այս համարում

### Հայերեն բաժին

|   |
|---|
| 1- Իրանահայերի մի հատվածի խորթացումը..1 |
| 2- Լուրեր – Իրանահայ համայնք.....2      |
| 3- Լուրեր – Իրան.....3                  |
| 4- Լուրեր – Հայաստան.....4              |
| 5- Սիջազգային.....6                     |
| 6- Հասարակական.....7                    |
| 7- Մշակույթ .....                       |

### Պարսկերեն բաժին

|                                   |   |
|-----------------------------------|---|
| 1- Լուրեր- Իրանահայ համայնք ..... | 1 |
| 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....      | 2 |

### Շապիկի առաջին էջում՝

Ս. Ղազանչեցոնց Եկեղեցին, Ծուշի, Նկարը 2008թ.


#### Վերջին էջում՝

«Բաֆֆի» Համալիրի մարզական խմբերը

Համար 154, Նոյեմբեր 2009 թ.

No. 154, November 2009

1388 մահ 154 ձի լուս – Տարբերակ



### Իրանահայերի մի հատվածի խորթացումը Հայաստանի հետ օգտավետ չեն ոգու

Հայ-Թրքական հարաբերությունների և այդ շրջանակում ՀՀ պետության կողմից արձանագրությունների ստորագրումը դրուել է մեր համայնքի բողոքարկող հատվածին, որոնք փորձում են իրենց տրամադրությունը տարածել իրանահայ համայնքի անդամների վրա, այս նպատակին համեմու համար նրանք օգտագործում են բոլոր միջոցները՝ եկեղեցի, դպրոց, միություն և այլն: Դժողով իսմբավորումների գլխին կանգնած է ՀՅ դաշնակցությունը, որը փորձ ունի՝ համայնքի որոշ հատվածի և Հայաստանի միջև խորվություններ առաջանական կազմություն և առաջանական ամեն կերպ փորձեցին սեա խրել մեր համայնքի և Հայերների միջև, այս ջանքերը միշնչ այն աստիճանի հասցրին, որ դաշնակցությունը ամեն կերպ փորձեց և հաջողեց արգելել, որպեսզի 1988 թվականի Հայաստանի Երկրաշարժից տուժածների համար իրանահայության կողմից հավաքված գումարները չփոխանցվեն Հայաստան: Այդ գումարները մնալով բանկում, արժեքազրկվեցին ու տարիներ անց, իբրև թե, ծորակաշինության գործարան իմնելու նպատակով օգտագործվեց և արդյունքում, երկար տարիներ անց, 300 դոլարի արժողությամբ էլեկտրական կաբելներ և մի հնացած ծորակաշինության սարքավորում հանձնեցին Ս. Եջմիածին ու իրենց ասելով՝ ձերքազատվեցին այդ գլխացավաճրից:

Դիմա, Ենթադրենք թե, կրկին անգամ դաշնակցությանը ու նրան հարող փոքրիկ որոշակի շրջանակներին հաջողվի սեա խրել մեր համայնքի և Հայաստանի միջև, որ ն է լինելու արդյունքը, արդյո՞ք նրանք այդ եղանակով իշխանափոխություն կառաջանանեն Հայաստանում, ինչի մասին արդեն բացահայտ արտահայտվում են:

Դեռ անցյալը մեզ համար դաս չի եղել: Հնարավոր է կարծ ժամանակվա համար հաջողվի նրանց, ազգային ինքնասիրության և զգացմունքների վրա խաղալով, որոշակի խավերի նոտ հակահայատանյան տրամադրություններ ստեղծեն, բայց անցյալի ննան դա կարծ կտևի և կրկին նույն մարդիկ նաև իրատեսութեն կնայեն հարցերին և կմկատեն, որ հայրենի պետությունը դավաճաններ կամ ազգային շահերին հակասող ուժեր չեն կառավարում: Մեր համայնքի անդամների շփոմը հայրենիքի հետ օրըստօքն զարգանում է, աշխատում են երեք հեռուստաալիքներ, որոնց միջոցով մեր համայնքի անդամները իրազեկ են լինում Հայաստանյան անցուղարձերին, աշխատում են սփյուռքով գրավլող տարբեր հաստատություններ, օրինակ, սփյուռքի նախարարությունը և այլն:

Կարուում են այն ուժերը, որոնք հակահայտանյան քաղաքականություն են վայրում համայնքում, աստիճանաբար կը հեղինակազրկվեն: Նրաք պետք է գիտակցեն, որ դեպի ԱՄ արտագաղթող մեր համայնքը կարիք ունի հայրենիքի ոգեշնչնան ու խրախուսնանը և չափութ է փորձել խարաբել այն: Որևէ պատրվակով չի լինի արդարացնել հակահայտանյան վարքագիծը, շինիչ առաջարկները պետք է ներկայացնել հայրենի պետությանը և այդ առաջարները այն ժամանակ ուշադրության կարծնանան, որ նրանց հետ բարեկամական հարաբերություններ որդեգրած լինեն :

Յուրաքանչյուր իրանահայ կարող է համակրել Լևոն Տ. Պետրոսյանին կամ Դայաստանի որևէ ուրիշ ընդդիմադիր ուժի, սակայն Դայաստանի և սփյուռքի պայմանների նմանեցումը կարող է հանգեցնել սխալների, որի ականատեսն ենք մենք այսօր: Նման վարքագծերը ոչ ոգու օգտավետ չեն լինելու և առաջին հերթին հենց վնասելու է սփյուռքում նախաձեռնող դրա հեղինակներին: Ուրեմն, անցյալի դասերը նկատի ունենալով, խորհուրդ կտայինք մեր համայնքի այդ հատվածին, որ վերանայի իր վարքագիծը և սարը դատողությամբ քննի բոլոր երևոյթները՝ ազգային շահերը գերադասելով նեղ խմբակային շահերից:

**Կտ. Ուրիշ Սարդարյան**

## Իրանահայ համայնք

### Թեհրանահայ ամենահայտնի Ֆուտբոլային ակումբը, Ֆուտբոլի գավաթային խաղեր նվիրված Թեհրանի «Րաֆֆի» համալիրի 30-ամյակին

Մոտ երկու տարի է, որ Դայ Սարգսմանշակութային «Րաֆֆի» համալիրի Ֆուտբոլային խճերը առաջնորդում են Թեհրանի հայ Ֆուտբոլը: Դանալիրը ունի տարբեր տարիքի հինգ Ֆուտբոլային խճեր, որոնք մասնակցում են նաև Թեհրանի պետական մրցություններին, իսկ իրանահայության վերջին երկու համահայկական խաղերի ընթացքում գրավել են առաջին տեղը:

Նախկինում իրանահայությանը հայտնի է եղել «Արարատ» կազմակերպության Ֆուտբոլի խումբը, որը ժամանակին խաղում էր երկրի առաջին լիգայում, իսկ հետագայում էլ՝ երկրորդ լիգայում, սակայն, դժբախտաբար, շուրջ երկու տարի է, ըստ կազմակերպության դեկավարների, Ֆինանսական պատճառներով լուծարքի է ենթարկվել և առայժմ «Արարատ» դեկավարությանը հաջողվել է կյանքի կոչել Ֆուտբոլի կրտսերների մի խումբ: Սակայն ՀՍՍ «Րաֆֆի» համալիրի Ֆուտբոլային աշխատանքները բարգավաճել են, և ստեղծվել է հինգ Ֆուտբոլային խումբ: Դանալիրը գտնվում է Թեհրանի ամենահայահոգ Նարմաք քաղաքասում: Դանալիրում գործում է ավելի քան 100 հայ մանուկներից բաղկացած Ֆուտբոլի դպրոց: Յուրաքանչյուր տարվա աշնան եղանակին համալիրում տեղի են ունենում աշնանային խաղեր, խաղերը իրականանում են միայն ուրբաթ օրերին և տևում են շուրջ երեք ամիս: Դոկտերների 23-ին կազմակերպվեց համալիրի 23-րդ աշնանային գավաթային խաղերը, որը նվիրված էր համալիրի հիմնադրման 30 ամյակին: Այս խաղերին նախանակցում էին «Սիփան», «Արարատ», «Արմեն», «Մոներ», «Րաֆֆի», «Շամալսարանական» և Թեհրանի ասորիների՝ «Սեբարէ Աշուր» Ֆուտբոլային խճերը: Բացման արարողության ժամանակ բացման խոսքով հանդես եկավ «Րաֆֆի» համալիրի երեցների բաժանմունքի նախագահ պրո. Վիգեն Մանդանյանը: Այնուհետև սկսեցին մրցել «Սիփան» և «Րաֆֆի» խճերը ու «Րաֆֆի»-ն հաղթանակ տարան:

«Րաֆֆի»-ի Ֆուտբոլային խճերը դեկավարվում են համալիրի 11 հոգանոց մի հանձնախմբի կողմից՝ պրո. Նորիկ Ղարիբյանի, Ժիրայր Բաբահանյանի և Ժիրայր Նավասարդյանի դեկավարությամբ, իսկ մարզումները կատարվում են համալիրում աշխատող Անդրանիկ Ղուրյանի և Ալբերթ Մինասյանի միջոցով, որոնք ունեն

պետության կողմից հաստատված մարզիչի վավերագրեր և դեռ շարունակում են մասնակցել տարբեր դասընթացների, որոնք կազմակերպվում են Թեհրանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի կողմից: Ֆուտբոլի դեկավարության կապն համալիրի վարչության հետ ստանձնել է վարչության անդամ պրո. Ժորես Դիլանյանը:

### Հայ-Թուրքական արձանագրությունների ըննարկում ԻԱՍՍ-ում

Սեպտեմբերի 23-ին իրանահայ Ազգային ու Մշակութային Միության հրավերով տեղի ունեցավ Դայ-Թուրքական հարաբերությունների շուրջ մտքերի քննարկում: Դրավիրված էին ներկայացուցիչներ Թեհրանի բոլոր միություններից ու ազգային մարմիններից, ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովովից, թաղի պատգամավորներ, հայկական տպագիր մամուլի ներկայացուցիչներ և մի շարք միութենականներ: Ներկա էին շուրջ 30 հոգի, երկում էր, որ հրավիրվածների մեծ մասը չէին եկել: Դավարին ներկա էին նաև ՀՀ դեսպանատան ներկայացուցիչ պրո. Սուլեն Գասպարյանը և Սեպուհ Աքք. Սարգսյանը: Մասնակիցները արտահայտեցին իրենց հար եւ դեմ տեսակետները՝ արձանագրությունների ստորագրման կապակցությամբ:

### Պաշտահանդես «Րաֆֆի» համալիրում

2009 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՍՍ «Րաֆֆի» համալիրում տեղի ունեցավ դաշտահանդես, որին մասնակցում էին ավելի քան 400 հոգի: Դաշտահանդեսի համար օգտագործվել էր համալիրի կանաչապատված Ֆուտբոլի դաշտը, որտեղ տեղադրվել էին սեղաններ ու աթոռներ: Դաշտահանդեսի ընթացքում հնչում էր կենդանի երաժշտություն և սպասարկվում էին տարբեր ճաշատեսակներ: Այս դաշտահանդեսը իր տեսակի մեջ առաջինն էր համալիրում և կազմակերպվել էր համալիրի երեցների բաժանմունքը և որը մեծ գործունակություն պատճեց մասնակիցներին:

Մեկ ամիս անց համալիրի մարզական բաժանմունքը իր երթին կազմակերպեց նմանատիպ միջոցառում:

### Մշակույթի օրվա տոնակատարություններ իրանահայ համայնքում

Արդեն երկար տարիներ է, որ իրանահայ համայնքում ստվորություն է այրձել մշակույթի օրվա կապակցությամբ տարբեր մարզամշակութային միությունների կողմից մշակութային գանձանակն ծեռնարկներ անցկացնելու: Այս տարի ևս համարյա թե բոլոր մարզամշակութային միությունները ունեն մշակույթի օրվան նվիրված աշխատանքներ:

### ՌՃԹ-ի Պժ-ի 12-րդ նիստ

2009 թվականի նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ Թեհրանի Հայոց թեմի 11-րդ նիստը, որը սկսվեց 20 րոպե ուշացումով և 35 հոգու ներկայությամբ: Տերունական աղոթքից հետո մեկ ռոպե լրությամբ Պժ-ն հարգեց պատգամավոր Թալին Կարապետյանի ու ազգային գործիչ դկտ. Լևոն Դավթյանի մահվան հիշատակը որոնք զոհվել էին Թեհրան- Երևան չվերթի վրարից:

Նախորդ արձանագրության ընթերցումից ու վավերացումից հետո ժողովը գրադպեց ըստ նախորդ ներկայացված օրակարգի հարցերով:

Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր հանձնաժողովների կյանքի կոչմանը: Այս հարցը քննարկման նյութը էր դարձել նաև 12 և 13-րդ Պատգամավորական ժողովի նիստերի ժամանակ, սակայն դիվանի և որոշ պատգամավորների կողմից չընդունացվելու հետևանքով մնացել էր միայն թղթի վրա և չէր իրականացվել: Նախատեսված չորս հանձնախմբերի հանար պատգամավորները արձանագրվեցին և վավերացվեց հետևյալ հանձնաժողովների կազմը. 1-Տնտեսական հանձնաժողով՝ 7 հոգի, 2-Կրթական հանձնաժողով՝ 7 հոգի, 3-Կազմակերպական հանձնաժողով՝ 5 հոգի և 4-Հասարակական ու մշակութային հանձնաժողով՝ 9 հոգի: Հանձնաժողովներին բաժանվեց թեմական խորհրդի կողմից պատրաստված երկամյա ծրագրերը, որոնք պետք է հանձնաժողովների կողմից ուսումնասիրվեն և հաջորդ նիստին ներկայացվեն ՊԺ-ին: Հանձնաժողովները պետք է գրադպեն նաև համայնքում իրենց բնագավառի հարցերով և իրենց վերլուծություններն ու առաջարկները ներկայացնեն ՊԺ-ին:

Ժողովի ընթացքում պարզ դարձավ, որ քահանահայրերից երկու հոգի ենթարկվել են Սրբազն Հոր կողմից ճշտված պատժամիջոցների, որի մարմարանաները չհաղորդվեց ժողովականներին:

## Իրան

### ԻՐԱԾԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ. «ԹՈՒՐԳԻԱՆ ԶԻ ԿԱՐՈՂ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ»

#### ՀՐՎԻԿ ԱՖՅԱՆ

«Իրան-Հայաստան բարեկամության ընկերության» ծրագրերի շրջանակներում մեկ շաբաթ է, ինչ Հայաստանում են իրանյան 9 ընկերությունների դեկավարներ եւ ներկայացուցիչներ: Բարեգործական ընկերությունը հայկական կողմից հետ իրականացնում է բազմաթիվ համատեղ տնտեսական, մշակութային եւ այլ ծրագրեր: Իրանց գործարարների պատվիրակությունը, որը գլխավորում է պարոն Ռահմանիֆարող, առաջին անգամ այցելելով Հայաստան, մեծ գոհունակություն հայտնեց հայկական կողմից հետ ձեռք բերված պայմանավորվածությունների վերաբերյալ՝ հույս հայտնելով, որ «խոսքը կդառնա գործ»: Պատվիրակության դեկավարն ու պատասխանատու պարոն Սոնինին մեծ սիրով պատասխանեցին «Ազգի» հարցերին:

- Ի՞նչ ծրագրերով եք Հայաստանում:

- Նախ նշենք, որ Հայաստանը Իրանի համար անշափ կարեւոր երկիր է, - ասաց պարոն Սոնինին, - Եւ մեր երկրների միջեւ տնտեսական շփումները շատ կարեւորվում են Իրանում:

Ուսումնասիրելով Հայաստանի շուկայի պահանջները, կարիքները՝ մենք՝ իրանյան 9 ընկերություններ, որոշել ենք մոտ իրականացնել չորս մեծ գործարար ծրագրեր: Առաջինը մալուխի արտադրության ծրագրին է, երկրորդը վերաբերում

անասնապահությանը եւ հողագործությանը, երրորդը կապի ոլորտին, մեր չորրորդ ծրագիրը վերաբերում է քաղաքի կանաչապատմանը: Այս ծրագրերի գործնական կիրառման ուղղությամբ անշափ կարեւորում ենք մեր պայմանավորվածությունները, որոնք ձեռք բերեցինք ՀՀ եներգետիկայի եւ այլ նախարարների հետ հանդիպումներում:

- Իսկ ինչպես եք գնահատում այսօր Հայաստան գործարար շփումները:

- Մեր գնահատականը դրական է: Նկատեք, որ մենք այժմ խոսում ենք ոչ թե զուտ տնտեսական շփումների մասին, այլ մատնանշումը ենք կոնկրետ ուղղություններ, եւ դրանց իրականացման համար այժմ անհրաժեշտ է միայն Հայաստանի դրական պատասխանը:

- Կոնկրետ ի՞նչ ընկերություններ են ներկայացված Հայաստանում (հարցու ուղղում են պատվիրակության դեկավար պարոն Ռահմանիֆարողին)

- Ելեկտրոնային ոլորտի իրանական 4 խոշոր ընկերություններ, որոնք, հույս ունենք, կնպաստեն Հայաստանի վերոհիշյալ ոլորտի զարգացմանը, «Համրավանե Ֆաջ» կապի ընկերությունը, «Քեյհան» ցանցը, «Փարջին Շաբրեսար» քաղաքների կանաչապատմանք գրադպող ընկերությունը եւ այլն: Ընդ որում շեշտեն, որ այս ընկերություններից յուրաքանչյուրը շուրջ 20 տարվա պատմություն ունի եւ իրանում արժանացել է բարձր գնահատականների:

- Իսկ ինչպես են իրանական գործարար շրջանակներում վերաբերվում Հայաստան-Թուրքիա հնարավոր մերձեցմանը: Զի՞ կարող արդյոք դա որոշակիորեն խոչընդոտել հայ-իրանական տնտեսական շփումներին:

- Ոչ, - պատասխանեց պարոն Սոնինին, - կարծում ենք հայ գործարարներն էլ գիտակցում են, որ Թուրքիայի հետ մերձենալով՝ չեն կարող հետին պլանում թողնել մեր երկրների շփումները: Բացի այդ, կարծում են, Թուրքիան, իր երերին իրավիճակով, երբեք չի կարող խոչընդոտել Իրան-Հայաստան բազմաշերտ շփումներին, քանի որ Հայաստանը Իրանի համար ոչ թե սովորական, այլ ուզանավարական գործընկեր է:

- Նախատեսվո՞ւմ է արդյոք հայկական նմանատիպ պատվիրակության այց Իրան:

- Այո, անպայման: Մենք ոլորտ առ ոլորտ պետք է ակտիվացնենք մեր շփումները: Այդ նպատակով հայկական պատվիրակությունը մոտ ապագայում կայցելի Իրան:

Հայաստան-Իրան բարեգործական ընկերության ներկայացուցիչ Ռուբեն Սարդարյանը վերջում տեղեկացրեց, որ իրանցի գործարարների պատվիրակությունը նոյեմբերի 4-ին մեկնում է Արցախ. «Այնուղի համագործակցության հիմնական ուղղություններն են անասնապահությունն ու հողագործությունն», տեղեկացրեց պարոն Սարդարյանը:

7.4.- Վերջերս իրանյան «Համշարիի» թերությ տեղ գտած «Հայ-Թուրքական բանակցություններում պարտվող կողմը Բաքուն է» հոդվածը, որի մասին «Ազգը» գրել էր նախորդ համարներից մեկում, կարծես թե «ցույց են տալիս» Իլհամ Ալիևին, թե ով է Պարարադի իրական տերը, համենայն դեպք՝ Իրանի կարծիքով:

## Շայաստան

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ, ԲԱՅՑ ՇԱՐԵԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ



ՍՄԻՒԵՏԸ ԽՆՉԱՏՐՅԱԸ

Թեեւ մազ էր մնացել, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը Ցյուրիխում խափանվեր, սակայն այն, ինչ հայ հանրությունը փորձեց իրար կցմցել պաշտոնական եւ ոչ պաշտոնական հաղորդագրություններից, ստորագրման արարողության ժամանակ աշխարհի հզորների դեմքերի արտահայտություններից, դիվանագիտական կեղծ ժպիտներից եւ ողջագուրբելու «ընթացակարգից», հետեւյալին էր հանգում. աշխարհի հզորները մի կերպ դգեցին-փշեցին փլվող ստորագրումը: Սակայն ստորագրությունը ոչ թե նվազեցեց բազմաթիվ հարցականները, այլ մի բան էլ ավելացրեց: Ինչո՞ւ 3,5 ժամից ավելի ստորագրումն ուշացավ, հատկապես ի՞նչ էր ուզում ասել Դավութօղլուն իր հայտարարության մեջ (դե, բոլորին էլ պարզ է, որ Լեռնային Ղարաբաղի եւ Ցեղասպանության խնդրի հետ կապված՝ իրենց հավերժական երգեցողությունը պիտի լիներ այնտեղ, հետադաս-ստորադասը կարեւոր չէ, կարեւոր է՝ ի՞նչ շեշտադրումով), ի՞նչ են համոզել նրան եւ է. Նալբանդյանին Քիմքոնն ու Լավրովը, որ էդաքս իրենցից գոյ քչիչում էին արարողության խորապատկերում, եւ էլի հարց՝ որ իհմա են մի կերպ համոզում թուրքերին՝ չխոսել, բա հետո ո՞ց է լինելու, երբ բանը արձանագրությունների իրականացմանը հասնի:

Մի խոսքով՝ բազում մտահոգություններ, որոնք հայ հասարակության տարբեր հատվածներ մինչ այս էլ ասել-խոսել էին: Բայց առայժմ՝ No comment, մերոնք պաշտոնապես ոչինչ չեն ասում, այլ միայն խոսակցությունը տանում են հեռուստալրատվականների ենթադրությունների եւ ասուլիսային «եթե-ապա»-ի մակարդակով: Եթեկ լրագրողներն իրենց սրտատրով գտեցին օդնավակայան, թե գուցե Մոսկվա մեկնող նախագահ Սարգսյանից մի բան կիմանան, գոնե այն, թե ի՞նչ է մտածում երկրի նախագահն արձանագրությունների՝ մի կերպ սունձված ստորագրման գործընթացի մասին, ի՞նչ գնահատական է տալու եղ ուշացմանն ու Դավութօղլուի «տիտիրիթներին», մանավանդ թուրքիայի վարչապետ Երդղանը արձանագրությունների ստորագրումից ժամեր հետո չափն անցել ու ասել էր, թե բանի հայկական գործերը դուրս չեն բերվել Աղոթեանի «գրավյալ տարածքներից», իրենք չեն վավերացնի Ցյուրիխում ստորագրված արձանագրությունները, իսկ սահմանն էլ կրացվի Աղոթեանի տարածքային ամբողջականությունը վերականգնելուց հետո: Բայց նախագահին նախօրոք

գծած երեք հարց տվին, ու այդ հարցը, բնական է, չկար դրանց մեջ, ու վերջ: Ի պատասխան էլ նա ցյուրիխյան արարողությունից ժամեր առաջվա ուղերձին էր համահունչ խոսել. «Կավերացմեն» թուրքերն արձանագրությունները, ծերնամուխն կիմն՝ այն գրաֆիկին, որ հաստատվել է՝ կշարունակենք գործընթացը, չե՞ն վավերացնի՝ մենք կաշկանդվելու ոչինչ չունենք՝ կանենք այն, ինչի մասին հայտարարել ենք»:

Իսկ ինչի մասին ենք հայտարարել. հոկտեմբերի 10-ին նախագահ Սարգսյանը, մի քանի ժամ արձանագրությունների ստորագրումից առաջ համարյա յուղ քեց արձանագրությունների ընդդիմախոսների հոգուն. ասաց՝ հայրենազրկման եւ ցեղասպանության փաստերը կավաճի տակ դնող ոչ մի քայլ, սահմանի հարցի լուծում արձանագրություններում չկա, տարածքային ամբողջականության եւ սահմանների անխախտելիության հիշատակումն արձանագրություններում լ. ի հիմնախնդրի հետ կապ չունի, այս բոլոր՝ համարյա դաշնակցականների հանգով: Դեռ վրադիր էլ ավելացրել էր՝ թուրքիայի կողմից արձանագրությունների վավերացման զգձգումը կամ վավերացման հնարարավոր նոր պայմանների առաջադրումը հայկական կողմի լիարժեք վերաբերնունքին կարժանանա՝ մենք միակողմանի ոչինչ չենք ստանձնում: Բա՞՛: Եթեկ թշկ փոխնախագահ Գալուստ Սահակյանն ավելի պարզեցրել էր այս «համարժեքն» ու «լիարժեքը». Դայաստանի Ազգային ժողովում արձանագրությունների վավերացման հարցը օրակարգ կմտնի՝ եթե թուրքիայի խորհրդարանը քննարկի եւ համապատասխան որոշում կայացնի. «Թուրքիան սահմանների բացել-չբացելը նախ խորհրդարանում պետք է քննարկի, որ հնարավոր լինի՝ մենք էլ քննարկենք», ասել է նա:

Մասցին Դայաստանի արգործնախարարության հայտարարության նշանը «խելամիտ ժամկետները» եւ թշկ կոչերը հանրությանը՝ «համատեղ ուժերով բացառելու արձանագրությունների վավերացումը հայոց խորհրդարանում» առաջարկով:

Չնայած եթե աշխարհի հզորները նալբանդյանին համոզում են, թե արի ստորագրի, Դավութօղլուին չենք թողմի ծայն հանի, դա նշանակում է, որ գործընթացը դեռ նոր-նոր սկիզբ է առել, այդքան երկար նախապատրաստումն ու բանակցությունները թուրքովին էլ չեն նոտեցրել կողմներին, ու կապ չունի՝ Սերժ Սարգսյանը կանա ֆուտորը, չի գնա, դա ընդամենք ինչ-որ գործընթացի նախանախասկիզբն էր, որ Դայաստան-թուրքիա խաղի թուրքական նասով կավարտվի: Իսկ բուն երկայացումը դեռ առջևում է. Եւ ծանր, հոգեկան ապրումներ, եւ նյարդերը փորձարկող ներկայացումը, որ հարուստ է լինելու եւ թուրքական ու ադրբեջանական «եղբարական» գրգիչ հայտարարությունների միզանցեններով, եւ հայկական կողմում պակաս կրթեր չեն բորբոքվելու, հուսով ենք՝ ողջամտության սահմանում:

Իսկ ընդհանուր առմանը՝ թուրքերից կարելի է այնպիսի արմատականության դրսեւորումներ սպասել մինչեւ խորհրդարանական քննարկումները եւ բուն թուրքական խորհրդարանում քննարկումների ժամանակ, որ գուցե Դայաստանի խորհրդարանին բանը չհասնի:

## «ԹՈՒՐԵՒԱՍ ԳԻՏԻ՝ ՈՒՐ Է ԳՆՈՒՄ ԵՎ ԻՆՉ Է ԱՆՈՒՄ»

Հոկտեմբերի 10-ի հայ-թուրքական արձանագրությունների ցյուրիխյան ստորագրումից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն թուրքական TRT1 ալիքին տված հայցարդույցում հայտարարել է, որ հայ-թուրքական արձանագրությունները «խաղաղության թուրքական նախագիծ» են, նրա խոսքերով. «Թուրքիան գիտի՝ ուր գնում եւ ինչ է անում»:

Մինենույն ժամանակ Դավութօղլուն շեշտել է, որ արձանագրությունների ստորագրումը չի նշանակում, որ Թուրքիան լրել է Ադրբեջանին. «Մենք միշտ եղել ենք Ադրբեջանի կողքին եւ միշտ էլ կպաշտպանենք նրա իրավունքները: Եթզ մենք խոսում ենք տարածաշրջանում խաղաղության մասին, ապա նկատի ունենք ադրբեջանական հողերի ազատագրումը: Անհրաժեշտ է վերադարձնել այդ հողերը, ոչ միայն Ղարաբաղը, այլև մնացած բոլոր գրավյալ տարածքները», շեշտել է թուրք նախարարը:

Այն խոսքերը, թե Թուրքիան չի ճանաչում Հայաստանին որպես պետության, Դավութօղլուն հերյուրանք է անվանել. «Թուրքիան ճանաչել է Հայաստանին, եւ մինչեւ 1993-ը մեր սահմանները բաց էին, սակայն հայերի կողմից ադրբեջանական հողերի բռնազավումը պատճառ դարձավ դրանք փակելու»:

Եվ այսօր, պատասխան խաղի նախօրեին, արդեն իսկ պարզ է, որ Թուրքիա-Հայաստան «խաղը» հոկտեմբերի 14-ին չի ավարտվելու. այն, մեղմ ասած, ֆուտրուային խաղ էլ չէ:

### ՀՊԿԿ ԱՅՑԱԼ

#### ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել «Երեբունի-Երեւան. 2791» տոնակատարություններին

Երեվան, 12 Հոկտեմբերի, ԱրՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 11-ին ներկա է գտնվել «Երեբունի-Երեւան.2791» տոնակատարություններին: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մանդու գրասենյակից, երկրի դեկավարը շրջել է մայրաքաղաքի կենտրոնում, դիտել քաղաքի տարբեր հատվածներում անցկացվող հանդիսավոր ներկայությունները, գրուցել երեւանցիների հետ, իսկ երեկոյան ներկա է գտնվել օրվա եղանակիչ ակորդին՝ Հանրապետության հրապարակում կայացած տոնական համերգին:

#### Մինչեւ տարեվերջ կամ մյուս տարեսկզբին կսկսվեն իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի եւ տերմինալի կառուցման դաշտային աշխատանքները

Երեվան, 16 Հոկտեմբերի, ԱրՄԵՆՊՐԵՍ: Մինչեւ տարեվերջ կամ մյուս տարեսկզբին կսկսվեն իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի եւ տերմինալի կառուցման դաշտային աշխատանքները: Ինչպես այսօր ոլորտի կարենորագույն ծրագրով ընթացքի ներկայացման նպատակով հրավիրված մամլու ասուլիսում նշեց ՀՀ ներգետիկայի եւ բնական պաշտպան նախարար Արմեն Մովսիսյանը, ծրագրով հնարավորություն կտա Թավրիզի նավթագութարանից խողովակաշարով երկոր համար անհրաժեշտ նավթամթերքի ծավալը ներկրել Հայաստան՝ մինչեւ Երասխ, որտեղից այն հանրապետության ողջ տարածքում իր սպառումը կունանա ավտոմեքենաներով, երկարգով:

Սա մի քանի անգամ կկրածախ տրանսպորտային ծախսերը, որոնք շատ թանկ են Փոքրից մինչեւ Երեւան:

#### Հայաստանի բուհերում սովորում է 110 հազարից ավելի ուսանող

Երեվան, 16 Հոկտեմբերի, ԱրՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի բուհերում 2009թ-ի հունվարի 1-ի տվյալներով սովորում է 110 հազարից ավելի ուսանող, որից 25 հազար՝ ոչ պետական հավատարմագրված բուհերում: Հանրապետությունում գործում է 19 պետական, 35 ոչ պետական հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություն, նաեւ 82 միջին մասնագիտական, 46 նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսիսատառություն, որոնք ներկա փուլում ունեն մոտ 35 հազար ուսանող:

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՇԱՐՁԱԿՈՒՄԸ ՇԱՐՁԱԿՈՒՄ Ե ՀԱՊԿԻ ՎՐԱ

Նոյեմբերի 24-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Արիեւը հայտարարել էր, որ Մինսկի խմբի գծին գծագվող աշխատանքների պատճառով այսօր Ադրբեջանին մնում է միայն ռազմական ճանապարհով հետ բերել «ադրբեջանական հողերը»:

Արհասարակ ադրբեջանական ռազմաշունչ հայտարարությունները՝ ամենաբարձր մակարդակներով, նորություն չեն: Ողջ իշխանությունը, նախագահ Ալիենի «գլխավորությանը», ներքին թե արտաքին լարամներին պարբերաբար «ներարկում» է պատերազմ սկսելու կոչեր: Ընդ որում, այդ կոչերը դատապարտվում են ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի, այնպես էլ միջազգային հանրության կողմից: Եվ ահա, այս ֆոնի վրա, Ո՞Դ նախագահ Դմիտրի Մեդվեդեվը նոյեմբերի 25-ին Բելառուսում հայտարարել է. «ՀԱՊԿ անդամ երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ արտաքին ազդեսիային կիետելի ՀԱՊԿ անդամ մյուս երկրների աջակցությունը, այդ թվում՝ ռազմական»: Առաջին հայացքից այս «անմեղ» հայտարարությունը, իր, թերեւս, իմնական իմաստն է ստանում, երբ նկատում ենք, որ Հայաստանը ՀԱՊԿ անդամ է, իսկ Ադրբեջանը՝ ոչ:

Ուսասատանի նախագահը շեշտել է նաեւ, որ ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերը ստեղծվել են անդամ բոլոր երկրներում. «Առաջ եկող դժվարին իրավիճակներին համատեղ հակագրելու նպատակով.- շարունակելով՝ Մեդվեդեվը նշել է.՝ այդ ուժերը, անհրաժեշտության դեպքում, կարող են իրականացնել նաեւ ռազմական գործողություններ: Հիշեցնեմ, որ ՀԱՊԿ անվտանգության պայմանագրի համաձայն գործում է այն նույն կանոնը, ինչն առկա է ՆԱՏՕ-ում, ըստ որի՝ անդամ երկրներից մեկի նկատմամբ հարձակումը դիտարկվում է որպես հարձակում դաշինքի, պայմանագրի վրա: Սա անչափ լուրջ ծեւակերպում է, իրականում դրա մասին մեզանից շատերը հաճախ մոռանում են, մինչդեռ գործընկերային պարտավորությունը հենց դա է, այդ թվում՝ ռազմական պարտավորությունը»:

Հիշեցնենք նաեւ, որ բացի Հայաստանից, ՀԱՊԿ անդամ երկրներն են Ուսասատանը, Բելառուսը,

Դազախստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը եւ Տաջիկստանը: Փաստորեն, Ո՞յ նախագահը «տեղեկացնում» է Ադրբեյջանին, որ Հայաստանի հետ պատերազմը վերսկսելու դեպքում հայկական բանակին իրենց ռազմական օգնությունն են ցուցաբերելու այս երկրները:

## «ՀՀ»-Ն՝ միջազգային ցուցահանդեսում

**Ինչպես բարձրացնել լրատվամիջոցների դերը Թեկրանի հմամ նումենի անվան մոսալլայում (իսլամական**

տոների համար ընդարձակ աղոթատեղի)

աշխատանքն է սկսել մամուլի, լրատվական գործակալությունն



երի եւ լրատվական կայքերի միջազգային 16—րդ ամենամյա փառատոն—ցուցահանդեսը՝ «Լրատվական միջոցների դերի բարձրացում եւ լրագրության պրոֆեսիոնալ բարոյականության խորացում» կարգախոսով:

Բացման խոսքով հանդես եկավ Իրանի ԶԼՍ-ների հարցերով մշակույթի եւ իսլամական առաջնորդության փոխնախարար, ցուցահանդեսի պատասխանատու Ալի Ռեզա Մալեքյանը՝ նշելով, որ սա փաստորեն մամուլի 3—րդ անկախ ցուցահանդես—փառատոնն է, իսկ մինչ այդ այն գրքերի ցուցահանդեսի մաս էր կազմում: Ցուցահանդեսում առկա է 600 տաղավար, 1500 պարբերական: Բացմանը ելույթ ունեցավ նաև մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարար Մելքոն Սոնհամմետ Հոսեյնին: Նա իր ելույթում շեշտը դրեց ցուցահանդեսի կարգախոսի վրա եւ կարեւորեց լրագրության արդարության ու ազնվության, օգտակարության, անկողմնակալության հարցերը: Ի տարբերություն անցյալ տարվա՝ օտարերկրյա տաղավարների ձեւավորման հարցում այս տարի կազմակերպիչներն օգալիորեն աջակցել են: Միաժամանակ նշենք, որ ցուցահանդեսին մասնակցում է ավելի քան 30 երկիր:

Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության» տաղավարին, հարկ է նշել, որ այն գտնվում է այցելուների ուշադրության կենտրոնում: Նրանք հետաքրքրվում են ոչ միայն օրաթերթով, այլ նաև Հայաստանով եւ հայ ժողովրդով:

Ի դեպ, «ՀՀ»-ն երկրորդ անգամ է մասնակցում այս ցուցահանդեսին:

Էմմա ԲԵԳԻՉՅԱՆ 22.10.2009 Թեկրան

## Միջազգային

### ԱՍԻԻ ԱԿԵՐԱԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՍՎԱՄԱՆ ՇԱՅ- ԹՈՒՐՅԱԿԱՆ ՇԱՄԱՏԵԴ ՆԱԽԱԳԻԾ

Այդ մասին հոկտեմբերի 25-ի համարում նշեց թուրքական «Մթար» թերթը, գոելով. «Հայաստան- Թուրքիա արձանագրությունների ստորագրումից հետո երկու երկրները ծեռնամուխ են եղել ձեռք ձեռք տալ, որ

համագործակցեն մշակույթի ոլորտում: Կարսից ոչ հեռու գտնվող Անիի ավերակների վերականգնման համար նախատեսվում է թուրք գիտնականների համրիպումը հայաստանցի գիտնականների հետ: Զուգընթաց դրան, շարունակվում են համատեղ համերգ կազմակերպելու աշխատանքները: 1915-ի հրադարձությունների ուսումնասիրման համար Թուրքիան առաջարկել էր երկու երկրների պատմաբաններից կազմված հանձնաժողով ստեղծել: Անիի ավերակների վերականգնման աշխատանքները դաշնամուլու են երկու երկրների գիտական եւ մշակութային գործիչների համագործակցության առաջին քայլը»:

Ի դեպ, Թուրքիայի մշակույթի եւ գրուաշջոջության նախարար երթուղու Գյուլնայը հաստատել է «Մթարին», թուրքական այս թերթին արած հայտարարությամբ. «Մշակույթի բնագավառում Հայաստանի հետ Թուրքիայի համագործակցության համար աշխատանքներ ենք ծավալում: Առաջինը երկու երկրների գիտնականների համատեղ աշխատանքներ կատարելու համար երկու երկրների գիտնականների եւ հնագետների խումբ է ստեղծվում: Շատ շուտով այդ ուղղությամբ կատարվելու են կոնկրետ քայլեր»:

## 7. ԶԱՐՅԱՆ

### ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Ե ՆԱԵՎ ԴԻԱՐԲԵՁԻՐԻ ՍՐ ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

#### Իհարկե, թուրքահայ համայնքի միջոցներով, հնաշես Կեսարիայի Սր Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին

Կեսարիայում կատարվելու է վերանորոգված Սր Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու օօնումը: Եկեղեցին Կ. Պոլսու հայոց պատրիարքարանի հովանավորությանը ենթակա այն 7 Եկեղեցիներից է, որոնք Փոքր Ասիայի եւ երկրի հարավարեւեյան շրջանների երբեմնի հայաբնակ քաղաքներում են գտնվում: Այդպիսի Եկեղեցիների շարքին է դասվում նաև Դիարբեձիրի Սր Կիրակոս Եկեղեցին, որի վերանորոգման նասին պաշտօնապես հայուրարպել է հոկտեմբերի 30-ին: Հայտարարությունը հենց Դիարբեձիրում անձանք արել է Կ. Պոլսու հայոց պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ Գերշ. Տ. Արամ արք. Աթեշյանը:

### ՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԽԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱԼԵԿԱՑՎԵԼ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքական «Թարաֆ» թերթը տեղեկացնում է, որ Վանի նահանգապետ Մունիր Կարաօղլուն դիմել է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությանը՝ թույլատրելու Սուլբ Խաչ Եկեղեցում կատարել Եկեղեցական արարողություններ: «Չնայած Եկեղեցին թանգարան է եւ այն բացելը նույնքան անհնար է, որքան, օրինակ, Ստամբուլի Սուլբ Սոֆիայի տաճարը, սակայն հաշվի առնելով հայ համայնքի պահանջը, կարծում են՝ տարին մեկ անգամ դա հնարավոր կլիինի», ասել է նահանգապետը: Նա նաև ավելացրել է, որ ինքն ընդունում է երկրի բարձրագույն ղեկավարության ցանկությունը՝ Հայաստանի հետ հարաբերությունները բարեկավելու, եւ կարծիք է հայտնել, որ դրանց ամենաշատը կշահի Վանը:

## ԱԴՐԵԶԱՍՉ ԶԱՐՏԵԶԻ ՎՐԱ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Ադրեզանցիները կրկին հիստերիայի մեջ են ընկել: Այս անգամ նրանց «ջղայնացել է» Euronews հեռուստաբնկերությունը: Հեռուստաբնկերության կայքուն կատարված նորացումից հետո «Եղանակի տեսություն» բաժնում Ադրեզանը բացակայել է այն երկրների ցուցակից, որոնց եղանակի տեսությունը գետեղված էր կայքէջում: Նախկինում, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, որոնք գտնվում էին Եվրոպական երկրների ցամկում, Ադրեզանը գետեղված էր ասիական երկրների ցամկում: Մինչեռ այժմ հեռուստաբնկերության աշխատակիցների «քերել ձեռքով» Ադրեզանն ընդհանրապես անտեսվեց:

Այս իրադարձությունն անտարբեր չի թողել ադրեզանական ԶԼՍ-ներին: Ադրեզանցիներն այդ փաստը համարել են արհանարիանք ու վիրավորանք, թե հեռուստաբնկերության համար Ադրեզանը քարտեզի վրա ընդհանրապես գոյություն չունի: Այս կապակցությանք դյուրագործությունը ադրեզանցիները հայտարարել են համազգային արշավ՝ ուղղված «աշխարհագրական արդարության վերականգնմանը»:

### ԹՈՒՐ ՄՏԱԿՈՐԱԿԱՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ՀՅ Ազգային ժողով էր այցելել Թուրքիայից ժամանած մտավորականների եւ կանանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների պատվիրակությունը:

Պատվիրակությունը Հայաստանում է «Ուրբան» կայուն զարգացնան հիմնադրանի «Եվրոինտեգրում եւ գեներային հարցերը» ծրագրի շրջանակներում: Թուրքական պատվիրակությունը ցամկություն էր հայտնել հանդիպելու Հայաստանի ԱԺ կին պատգամավորների հետ եւ քննարկելու կանանց հիմնախնդիրների լուծման ազգային ծրագրի եւ Եվրոինտեգրման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՅ որոեգոած քաղաքականության մի շարք կարեւոր հարցեր:

Թուրք իյուրերին ընդունեցին խորհրդարանի կին պատգամավորները: Նրանք հույս հայտնեցին, որ սկսված հայ-թուրքական երկխոսության արդյունավետությանը իրենց նրբանկատությամբ ու մեջմությամբ կնպաստեն նաեւ կանայք:

Բոսֆորի համալսարանի գիտաշխատող Դեմիր Ռահիմն Բուլութը տեղեկացրեց, որ ուսումնասիրում է 1900-ի սկզբին հայատառ թուրքերենով գրող հայ գործիչների աշխատությունները: Այդ ուսումնասիրության ճանապարհին ինքը բազմաթիվ հետաքրքրական փաստերի է հանդիպել Թուրքիայում հայերի ակտիվ գործունեության եւ մեծ ներակատարության վերաբերյալ: Ի պատասխան ասվածի, ԱԺ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ԲՀԿ խմբակցության անդամ Նախրա Զոհրաբյանն ասաց. «Ես ուրախ եմ, որ դուք զբաղվում եք պատմության ուսումնասիրմանը, վստահ եմ որ կլինեք անաշառ՝

դրանով օգնելով Թուրքիային ընդունելու պատմական ծշմարտությունը, որովհետեւ յուրաքանչյուր պետություն հզոր է դարձնում նաեւ իր անցյալն ընդունելով»:

Պատվիրակության ղեկավար, Ֆաթի համալսարանի դոցենտ Քաֆեր Ուլուն զբաղվում է հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությամբ, հեղինակն է «Հայերը Թուրքիայուն» ծավալուն աշխատության, որի մի օրինակը նա նվիրել է Հայաստանի Աժ գրադարանին: Իր ուսումնասիրությունների տարիներին Քաֆեր Ուլուն բացահայտել է, որ թուրքական թատրոնի, երաժշտության, գրականության վրա բավական մեծ է հայկական ազդեցությունը, միաժամանակ թուրքերն էլ որոշակի ազդեցություն են ունեցել հայկական մշակույթի վրա: Թուրքական պատվիրակները կարծիք հնչեցրին, որ անհրաժեշտ է ակտիվացնել հասարակական շփումները, ինչին ի պատասխան Նախրա Զոհրաբյանը նկատեց, թե հասարակություններն իրենք կարող են ազդել պետական քաղաքականության վրա, եւ վստահություն հայտնեց, որ թուրք հասարակությունը կունենա համարձակություն ընդունելու պատմական ծշմարտությունը՝ ազդելով իր երկրի պետական դիրքորոշման վրա, դրանով նպաստելով երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը:

### 7. ԶԱՐՅԱՆ

## Հասարակական

### Նամակ ուղղված ԹՇԹ-ի Գերաշնորի Առաջնորդ Տ.Ս.Արք. Սարգսյանին

Գերաշնորի Սրբազն հայը

Ուրախությամբ տեղեկացանք, որ օրեք առաջնորդարանի դահլիճում տեղի է ունեցել հաւաքամախմբում՝ հայ գրողների, մտարականների, մամլյ ներկայացուցիչների եւ ընդիանրապէս գրասէր անհատների միջև, որին մասնակցել են աւելի քան 24 հոգի:

Լուրը ինքնին ուրախալի էր առաջին հայացքից, սակայն ավելի խորը մտածելով ծագում են բազմաթիվ հարցեր որոնք հարմար նկատեցինք ուղղել ձեզ, ոչ թէ պատասխան ստանալու հույսով, այլ ուղղակի մեր մտահոգությունները Ձեզ հետ կիսելու, մեր խոսքը Ձեզ հասնելու նպատակով: Երևակ զարտնիք չէ որ իրանահայ համայնքը ունի բազմաթիվ կառուցներ՝ սկսած Պատգամավորական ժողովից, թեմական խորհուրդ, եկեղեցական բազմաթիվ խորհուրդներ, տասնյակ միտություններ, դպրոցների ծնողական խորհուրդներ ... , ենքաղը վում է որ այս բազմաթիվ համախումբերում քրանչացան աշխատող անձիք պետք է լինեն մտավորականներ ավելի ճիշտ ձեւակերպման սեփական միտք ունեցողներ, ( եթէ չասենք գրողներ կամ մամլյ ներկայացուցիչներ ) արդյօք Իրանահայ թեմի Պատգամավորական ժողովն ու թեմական խորհուրդը առիթ չ'է, որպէս մի մեծ ընտանիքի անդամներ, միմեանց աւելի լաւ ճանաչնեք, հաղորդակից դաշնանք

միմեանց հոգե-մտառը աշխարհին եւ ազգային ու մշակութային մեր մտահոգութիւններն ու սպառնալիքները համատեղ կերպով քննելու, թէ՝ մտածում եք պատգամավորական ժողովի կամ ... բազմաթիվ համայնքային կառույցների դեկավար անդամները չեն կարողանում «ես», «որու» եւ կամ «իմ» դերանունները մի պահ մոռանան փոխարինեն «մենք» - ով:

Արյոջ մտածում եք, որ նշված կառույցները չեն ծառայում արարատանման հաւատորով տոլկալու աննպաստ կացութիւնների, վտանգաւոր դարադարձների, անվերջանալի սպառնալիքների եւ ցեղակործան ցեղասպանութիւնների փորձերի առաջ և չեն ստեղծագործում ամենագեղեցիկն ու ամենակատարեալը:

Եթէ ոչ, ուրեմն ինչ նպատակների են ծառայում մեր բազմաթիվ միությունները, խորհուրդներն ու ժողովները այսքան երկար տարիներ:

Բարձրաշնորհ Տեր Սրբազն Հայր, հասկանալի է որ հրավիրելով (որոշ) մալո ներկայացուցիչների կարեւորում եք մամուլի դերը նաև համայնքի կեանքում, բայց Արյոջ քամուլի աշխատանքը միտված չէ միմյանց ավելի լավ ճանաչելու և մոռահոգություններով կիսկելու սրբազն գործին:

Ցավոք, դուք ճիշտ եք մեր համայնքի բազմաթիվ կառույցները իրոք չեն ծառայում իրենց նպատակներին, համայնքի Պատգամավորական ժողովը, թեմական, կրթական, եկեղեցական, ... խորհուրդները, աննպաստ կացութիւնների, վտանգաւոր դարադարձների, անվերջանալի սպառնալիքների եւ ցեղակործան ցեղասպանութիւնների փորձերի առաջ դիմանալ չեն կարող, ավաղ արդեն տասնամյակներ մեր համայնքի կառույցները կամ «բիլյարդանոց» ները (նախքին միություններ) վերածվել են ինչ որ մարդկանց (չուզենալով ասել՝ կուսակցությունների) շահերը կուրորեն հետապնդող, այդ շահերին անվարան ծառայող ու կուրորեն թեր քվեարկող կառույցների: Բարձրաշնորհ Տեր սրբազն հայր, որպես չորրորդ իշխանության ամենափոքր ներկայացուցիչ և համայնքում ձեր աշխատանքներին քննարատարար հետեւող լրատվամիջոց, մեր պարտը համարեցինք այս տողերը ուղղել Ձեզ, քաջ զիտակցելով, որ Ձեր բոլոր ջանքերը միտված են համայնքի կյանքը օրեցօր ավելի նպատակառդված դարձնելու, սակայն թույլ տվել օգտագործելով խօսքի ազատության մեր համամարդկային իրավունքը, հիշեցնել նաև, որ համայնքն այսօր կառույցներից ավելի կարուցողական մտքի կարիքն ունի, համախումբերից ավելի շատ կարիք ունի իրար հանդուժողների, միմյանց տեսակետները հարգողների, իսկ քվեարկողներից ավելի կարիք ունի ինքնուրոյն մտածողների:

**Որդիական խոնարհութեամբ  
մատչիմ ի համբոյր Ձեր Սրբազնութեան Սուրբ Աջոյն  
Իրանահայեր Լրատու Յանց  
Ոուրիկ Մինասյան**

## Մշակույթ

**Հայ-Իրանական դիվանագիտական  
առնչությունները  
(Պատմական հաճառու ակնանկ)**

Դր. Էդ. Բաղդասարյան  
[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)  
[edbagh@yahoo.com](mailto:edbagh@yahoo.com)

1920 թ. նոյեմբերի 29-ին, Սովետական Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի օգնությամբ, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվեցին: Իրանը խորհրդային Հայաստանը պաշտոնապես ճանաչեց 1921 թ. օգոստոսի 14-ին:<sup>1</sup>

Հայաստանի նոր կառավարությունը 1921 թ. մայիսի 17-ին Իրանի արտաքին գործերի նախարարին հղած ուղեծում, առաջարկում է մոտ ապագայում իր լիազոր ներկայացուցիչը նշանակել Թեհրանում եւ համոզնունք է հայտնում, որ Իրանի կառավարությունը իր հերթին չի մերժի իր ներկայացուցիչն ուղարկել Հայաստան: <sup>2</sup>

Իրանի կառավարությունը իր պատրաստակամությունը հայտնեց ընդունելու Սովետական Հայաստանի լիազոր ներկայացուցիչն, իսկ մինչեւ վերջինիս ծամանելը Թեհրան, Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ֆ. Ա. Ռուտշտենին ճանաչել որպես Իրանում Սով. Հայաստանի շահերը ներկայացնողի, որին Հայաստանի կառավարությունը հասուկ հեռագործ խնդրել էր ժամանակավորապես ներկայացնել եւ պաշտպանել Սով. Հայաստանի շահերը:<sup>3</sup>

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության եւ Իրանի կառավարությունների միջև փոխանակամատ հուշագրերի բովանդակությանը համապատասխան Իրանի արտաքին գործերի նախկին դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Արդուրյանին առաջարկեց Հայաստանի դիվանագիտական միխայիլ գործերն ու արխիվը հանձնել Թեհրանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն: Իրանի արտգործնախարարության ծանուցագրում միաժամանակ նշվում է, որ «Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդից գրություն ու հեռագիր ստանալուց հետո Պարսկաստանի կառավարությունը չի կարող Ձերդ գերազանցությանը ճանաչել որպես Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ եւ, հետեւլար, անհրաժեշտ է հրաժարվել դրոշակը բարձրացնելոց»:<sup>4</sup>

Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցությունը Թեհրանում բացվեց 1921 թ. սեպտեմբերի 27-ին:<sup>5</sup> Հանդիսավոր արարողությունը բացեց ՈՒՖՈՒՀ-ի լիազոր ներկայացուցիչ Ռուտշտենը:

Հայաստանի ԽՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ Լենն Սարգսյանը Թեհրան ժամանեց 1921 թ. նոյեմբերի 3-ին: Հաջորդ օրը Իրանի արտգործնախարարության արձանագրային բաժնի վարիչը այցելեց նրան եւ Շահնշահի անունց հոգունեց Հայաստանի ԽՍՀ-ի լիազոր ներկայացուցիչն:<sup>6</sup>

<sup>1</sup> - Ա. Եսայան, Հայաստանի միջազգային-հրավական դրությունը, 1920-1922 թթ., Երեւան, 1967, էջ 172:

<sup>2</sup> - Նույն տեղում, էջ 345:

<sup>3</sup> - Նույն տեղում, էջ 384:

<sup>4</sup> - Ա. Եսայան, նշվ. աշխատություն, էջ 246:

<sup>5</sup> - Նույն տեղում, էջ 385:

<sup>6</sup> - Նույն տեղում, էջ 385:

# Լույս Ամսագիր

Լ. Սարգսյանին նոյեմբերի 9-ին Սահեր Ղարանին պալատում ընդունեց Շահը, ստացավ հավատարմագիրը, ապա Սահոսակ պատում նև հանդիպեց վարչապետին և արտգործնախարարին:<sup>7</sup>

Իրանի պետությունը, Հայաստանի լիազոր ներկայացուցի մասին նամակով տեղեկացրեց ՀԽՍՀ Կոմիսարների նախագահ Ալ. Մշանկյանին:<sup>8</sup>

1922 թ. վերջին Անդրկովկասյան հանրապետությունների ֆենքրատիվ միությունն իր միասնական դիվանագիտական ներկայացուցիչը նշանակեց Թեհրանում եւ այդ կապակցությամբ Հայաստանի ԽՍՀ-ի լիազոր ներկայացուցությունը Իրանում փակվեց ԽՍՀ ժողովնախորհրդի 1922 թ. նոյեմբերի 1-ի որոշմամբ:<sup>9</sup> Այսուհետեւ Սովետական Միության դեսպանությունում ստեղծվեց հայկական հարցերի բաժանունը, բայց Թավրիզում գործում էր Հայաստանի գլխավոր հյուպատոս ճանաչելու խնդրով: Այսպես, 1921 թ. նոյեմբերի 29-ին Թավրիզում պաշտոնապես բացվեց Հայաստանի գլխավոր հյուպատոսությունը:<sup>10</sup>

Լիազոր ներկայացուցության ջանքերի շնորհիվ Իրանի հետ առնտրական փոխհարաբերություններ հաստատվեցին եւ կարգի գցվեց Հայաստանը զանազան մթերքներով մատակարարելու գործը:

Խոսելով հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների մասին, հարկ է նշել նաև Հայաստանում Իրանի դիվանագիտական ներկայացուցիչներին:

Դեռ ցարիզմի օրոք Երեւանում հիմնադրվել էր պարսկական հյուպատոսություն, եւ շարունակում էր գործել Հայաստանում սովետական իշխանություն հոչակվելուց հետո եւս: Երեւանում պարսկական հյուպատոսն էր Ասարուլլա Խան Մանի-օլ-Մոլլը: Պասկական հյուպատոսության անձնակազմը բարեկացած էր 9 հոգուց, այդ թվում 3 ֆարրաշ (պահակախումբ), որոնց միջոցով էլ հյուպատոսության պահպանումը կատարվում էր Երեւանում:<sup>11</sup>

Պարսկական հյուպատոսությունը Երեվանում դադարեց գործելուց 1933 թվականին:<sup>12</sup>

\* \* \*

1991 թվականի սեպտեմբերին, Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ հոչակվեց Հայաստանի հանրապետության անկախությունը, Իրանը առաջին պետություններից էր, որ նոյն թվականի դեկտեմբերին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը:<sup>13</sup> Ուստի Երկու երկրները որոշեցին դիվանագիտական կապեր հաստատել: Հայ-իրանական բազմակողմնի հարաբերություններ հաստատելու նախապատրաստական քայլերի համար 1992 թ. փետրվարի 8-ին Թեհրան ժամանեց Հայաստանի հանրապետության արտաքին գործերի

<sup>7</sup> - Նույն տեղում, էջ 386:

<sup>8</sup> - Նույն տեղում, էջ 387:

<sup>9</sup> - Նույն տեղում, էջ 389:

<sup>10</sup> - Նույն տեղում, էջ 392:

<sup>11</sup> - Նույն տեղում, էջ 404:

<sup>12</sup> - Նույն տեղում, էջ 405:

<sup>13</sup> - Ալիք, Թեհրան, 1991 դեկտեմբերի 26:

նախարար Բաֆքի Հովհաննեսիանը գլխավորելով մի բարձրաստիճան պատվիրակություն:<sup>14</sup> Նա հանդիպում ունեցաւ Իրանի իսլամական հանրապետության նախագահի, խորհրդարանի նախագահի, արտգործնախարարի եւ այլ բարձրաստիճան անձանց հետ:<sup>15</sup>

Իրանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարների բանակցությունների ավարտին սոորագրվեցին դիվանագիտական հարաբերությունների հաստատման համատեղ մի հոչակագիր երկու երկրների միջեւ բաղադրական, տնտեսական, մշակութային ու գիտական հարաբերությունների կապակցությամբ (1992 թ. փետրվարի 9-ին):

Միացյալ հոչակագրի մեջ կողմերը հաստատեցին բարիդրացիստական հարաբերությունների, տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի եւ միմյանց ներքին գործերին չմիջանակ սկզբունքները: Հոչակագրում շեշտված էր դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Իրանի Խալամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ դեսպանատների մակարդակով:

Կնքված համաձայնագրի մեջ նախատեսվել էին սահմանային կապերի ստեղծման, Իրանի զափի Հայաստան արտահանման, քարյուղազուարանի կառուցման եւ այլ խնդիրներ:<sup>16</sup> Այդ հոչակագրի սոորագրումից անմիջապես հետո, Իրանի ճանապարհների եւ հաղորդակցության նախարար Սահի-Ծիայի եւ Հայաստանի տրանսպորտի եւ հաղորդակցության նախարար Հենրիկ Չոչիմյանի միջեւ սոորագրվեց մի համաձայնագիր, երկու երկրների միջեւ ճանապարհային փոխադրությունների եւ օդային ուղևորությունների շորջ համագործակցությունները ծավալելու գծով:<sup>17</sup>

Իրանի խալամական հանրապետության նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հրավերով պաշտոնական այցելությամբ, 1992 թ. մայիսի 6-ին Թեհրան ժամանեց Հայաստանի հանրապետության նախագահ Լեռն Տեր-Պետրոսյանը եւ նրան ընկերակցող պատվիրակությունը: Երկու նախագահները նոյն օրը բանակցեցին բաղադրական, տնտեսական ու արդյունաբերական, հաղորդակցության եւ քարյուղային համագործակցությունների զարգացման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ:<sup>18</sup>

Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի միջնորդությամբ, 1992 թ. մայիսի 8-ին, դարձարայան հակամարտության կարգավորման գծով, սոորագրվեց մի հայտարարություն Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Ալիքի Թեհրանի հանրապետության նախագահության պաշտոնակատար Յաղութ Մահմեդովի, ինչպես նաև Իրանի նախագահի կողմից, որպես դիվորք:

Հայաստանի նախագահը հանդիպումներ ունեցաւ իրանահայության հետ Թեհրանում եւ Նոր Ջուլյանում, ինչպես եւ կայացան փոխացեր. 1992 թ. Փետրվարի 28-ին Իրանի արտգործնախարար Ա. Վելայեթին պաշտոնական այցով Երեւանում հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի,

<sup>14</sup> - Ալիք, Թեհրան, 1991 փետրվարի 8:

<sup>15</sup> - Ալիք, Թեհրան, 1991 փետրվարի 10:

<sup>16</sup> - Քեյհան, բահման 21, 1370թ.:

<sup>17</sup> - Ալիք, Թեհրան, 1992 փետրվարի 10:

<sup>18</sup> - Ալիք, Թեհրան, 1992 մայիսի 7:

<sup>19</sup> - Ալիք, Թեհրան, 1992 մայիսի 11:

# Լույս Ամսագիր

գերազույն խորհրդի նախագահի, վարչապետի եկ արտգործնախարարի հետ:<sup>20</sup>

ՀՀ փոխ-նախագահ Գագիկ Հարությունյանը 1992 թ. դեկտեմբերի 21-ին մի քարձրաստիճան պատվիրակության գլխավորությամբ, Թեհրան ժամանեց բանակցությունների համար Իրանի իշխանությունների հետ.<sup>21</sup>

1992 թ. հոկտեմբերի 22-ին, Իրանի Առեւտրական պալատի նստավայրում բացումը կատարվեց Իրան-Հայաստան առեւտրական պալատի<sup>22</sup>:

1992 թ. դեկտեմբերի 22-ին հանդիսավոր արարողությամբ Թեհրանում բացվեց Հայաստանի հանրապետության դեսպանատունը:

Երեւանում Իրանի դեսպանատան պաշտոնական բացումը հանդիսավոր արարողությամբ տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին: Հավատարմատար նշանակվեց, Քահման Ղասեմին, որին փոխարինեց Ահնադ Սորիանին:<sup>23</sup>

1994 թ. սեպտեմբերին հայ-իրանական փոխարարերությունները բարձրացվեցին դեսպանի մակարդակի եկ Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին նշանակվեց որպես Իրանի Խորհրդական հանրապետության արտակարգ դեսպան եկ լիազոր նրելայացուցիչ Հայաստանի համբավետությունում<sup>24</sup>, որին հետագայում փոխարինեց Մոհամմադ Ֆոլեյնին: Ներկայում ԻԻ համբավետության դեսպանն է Ալիուզա Հալիլյանը:<sup>25</sup> Խոկ Պրոֆ. Վահան Բայրուրյանը որը մինչ այդ ՀՀ հավատարմատարն էր ԻԻ հանրապետությունում, դարձավ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին դեսպանը Իրանում: 1999 թվականին Գեղամ Ղարիբջանյանը դարձավ ՀՀ դեսպան Իրանում: 2005 թ. փետրվարից ՀՀ դեսպանն է Կարեն Նազարյանը:

1994 թ. սեպտեմբերի 8-ին Երեւանի Մարզահամերգային համայիրի ճեմարանում բացվեց Իրանի Խորհրդական Հանրապետության արտադրանքների ցուցահանդեսը:<sup>26</sup>

1995 թ. հունարի 13-ին, Հայաստանի Հարապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի և Իրանի Ֆինանսների նախարար Սորբեզան Մոհամմադիսանի ներկայությամբ Երեւանում բացվես Իրանի «Մելլար» բանկի մասնաճյուղը:<sup>27</sup>

1995 թ. փետրվարի 7-ից 11-ը Հայաստանի պատմության բանկարանում, Հայաստանում Իրանի դեսպանատան, Իրանի արտգործնախարարության քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի եւ Ռազմավարական ու ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի համատեղ շանքերով կազմակերպվեց երկու կենտրոնների աշխատանքների եւ հայ-իրանական կապերին առնչվող պատմական փաստաթղթերի ցուցահանդեսը:<sup>28</sup>

1995 թ. Իրանը, Հայաստանն ու Թուրքմենստանի արտգործնախարարները հերթական եռակողմ նստաշրջաններ կազմակերմեցին իրենց մայրաքաղաքներում, փոխադրության ու հաղորդակցության ընդարձակման համար եւ ստորագրեցին համապատասխան համաձայնագրեր: Օգոստոսի 21-ին ԻԻ Հանրապետության

<sup>20</sup> - Ալիք, Թեհրան, 1992 փետրվարի 29:

<sup>21</sup> - Ալիք, Թեհրան, 1992 դեկտեմբերի 22 եւ 24:

<sup>22</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 1994:

<sup>23</sup> - Նայիրի տարեգիրը, Թեհրան 2008, էջ 420:

<sup>24</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 1994:

<sup>25</sup> - Նայիրի տարեգիրը, Թեհրան 2008, էջ 420

<sup>26</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 1995:

<sup>27</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 1996:

<sup>28</sup> - Նույն տեղում:

խորհրդարանի փոխնախագահ եւ ազգային անվտանգության գերազույն խորհրդի քարտուղար դոկտ. Ռուհանին զիսավորությամբ մի քարձրաստիճան պատվիրակությունների համար Իրանի իշխանությունների հետ:<sup>29</sup>

1997 թվականին իրագործվեց Հայաստանի եւ Իրանի ելեկտրահաղորդագծերի միացումը: Նաև Երեւանում բացվեց Իրանի առեւտրական տեղմինալը: ԻԻ Հանրապետության նախագահի առաջին տեղակալ դոկտ. Հարիրին այցելեց Հայաստան: Հաջորդ տարիներում էլ Իրան-Հայաստան բազմակողմանի հարաբերությունները զարգացում ու վերելք ապրեցին:<sup>30</sup> Հայ-պարախ-հունական եռակողմ համագործության բանակցություններն ու քաղաքական գիտաժողովներ Իրանում ու Հայաստանում կայացան:<sup>31</sup>

2000 թվականի ապրիլի 9-ին Երեւանում Իրանի նոր դեսպան նշանակվեց Մոհամմադ Ֆարհադ Քոլեսին:<sup>32</sup>

2001 թվականի դեկտեմբերի 25-ից 27-ի ընթացքում Իրանը յուրընկալեց Հայաստանի նախագահ Ռոշարյանին: Նա հանդիպեց նախագահ Խարամիի, ԻԻՀ-ի առաջնորդ այար. Խամենեյի եւ նախարարների հետ: Ստորագրվեցին մի քանի փաստաթղթեր, որոնցից կարեւրագույնը՝ Իրան-Հայաստան 141 կմ երկարությամբ զազատարի կառուցումը եւ Քաջարանի բունելի էին:<sup>33</sup> 2004 թ. սեպտեմբերի 8-ին ԻԻՀ նախագահ Խարամին պաշտոնապես այցելեց Հայաստան: <sup>34</sup> Ո. Քոչարյանն ու Մ. Խարամին քննարկեցին երկու երկուների հարաբերությունների բազմաթիւ հարցեր: Ստորագրվեցին 7 փաստաթուղթ՝ համագործակցության, նշակութային, մաքսային ծառայության, էներգետիկայի նախարարությունների միջև, Ստորի-Քաջարան, գազատարի կառուցման մասին:

2005 թ. փետրվարի 23-ին Թեհրան ժամանեց Իրանում Հայաստանի հանրապետության նոր դեսպան պրն Կարեն Նազարյանը:<sup>35</sup> 2006 թ. սեպտեմբերի 11-ին Իրանի Խորհրդական Հանրապետության խորհրդարանի նախագահ Ղուլամադի Հարդար Ալեյլը պաշտորապես այցելեց Հայաստան, բանակցություններ վարել Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:<sup>36</sup> Իրան-Հայաստան զազատարի կառուցման ավարտված է: Ինչպես նշեց Եներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը, մնում է միայն ավարտել Հայաստանում Քաջարանից մինչեւ Երեւան զազատարի թողոնակության բարձրացման աշխատանքները, ինչը նախատեսված է մինչեւ այս տարվա (2008) նոյեմբերը: Ծուսով կազմվեն զազատարի փորձարկման աշխատանքները, որոնց ավարտից հետո արդեն հնարավոր կլինի ամբողջ հզորությամբ օգտագործել:<sup>37</sup>

Հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունը օր ըստ օր զարգացում է ապրում, երկու ժողովորդները լավ են ընդունում իրենց պատճական բարեկամության եւ բարիգայցիության նշանակությունը եւ այսօր ցանականում են պարտավոր են լինել ուղղական գործընկերներ:

## Հար. 3 Եւ վերջ

<sup>29</sup> - Նույն տեղում:

<sup>30</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 1998:

<sup>31</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 2000:

<sup>32</sup> - Նայիրի օրացույց, Թեհրան, 2001:

<sup>33</sup> - Րաֆֆի օրացույց, Թեհրան, 2003:

<sup>34</sup> - Նայիրի օրացույց, Թեհրան, 2005:

<sup>35</sup> - Նայիրի օրացույց, Թեհրան, 2006:

<sup>36</sup> - Նայիրի օրացույց, Թեհրան, 2007:

<sup>37</sup> - Լոյս ամսագիր, Թեհրան, համար 146, Նոյեմբեր, 2008.